«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

## 1. Կրթության(և զարգացման) առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ) գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում(2026 թվականի հունվար–հունիս) նախատեսվել էր իրականացնել՝

- 85 ԿԶԱՊԿ գնահատում,
- 133 ԿԱՊԿ գնահատում:

**Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել է՝**

- 83 ԿԶԱՊԿ գնահատում (նախատեսվածից 2-ով պակաս),
- 124 ԿԱՊԿ գնահատում (նախատեսվածից 9-ով պակաս):

**Գնահատման գործընթացի պատշաճ կազմակերպումը և իրականացումն ապահովվել է Կենտրոնի կողմից՝**

- ժամանակի և ռեսուրսների նպատակային օգտագործման,
- գնահատման գործընթացում համապատասխան մասնագետների թիրախային ներգրավման,
- կրթական հաստատություններից ստացված հայտերին ժամանակին արձագանքման,
- շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ:

## 2. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում

Հաշվետու ժամանակահատվածում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են տրամադրվել Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնին ամրակցված ուսումնական հաստատություններում սովորող 1187 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք(ԿԱՊԿ) և կրթության և զարգացման առանձնահատուկ աջակցության կարիք(ԿԶԱՊԿ) ունեցող երեխաների:

### 2.1. Հանրակրթական ուսումնական հաստատություններ

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի սպասարկման տարածքի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել են 984 ԿԱՊԿ ունեցող սովորողներ, որոնցից՝

- 776 սովորող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է ստացել Կենտրոնի մասնագետների կողմից,

- 123 սովորող աջակցություն է ստացել ուսումնական հաստատությունների մասնագետների կողմից,
- 85 սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ չեն տրամադրվել հետևյալ պատճառներով՝
  - 62 սովորող հանդիսանում է Մ. Իզմիրյանի անվան մանկատան տնային ուսուցման սան և անհրաժեշտ աջակցությունը ստանում է մանկատան մասնագետների կողմից,,
  - 3 սովորողի դեպքում ծառայություններ չեն տրամադրվել՝ հիմք ընդունելով ծնողների գրավոր դիմումները,
  - 18 սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դադարեցվել է այլ ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքում գտնվող ուսումնական հաստատություն տեղափոխվելու կամ արտերկիր մեկնելու պատճառներով,
  - 2 սովորողի հերթական գնահատման արդյունքներով այլևս չի արձանագրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

## 2.2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Հաշվետու ժամանակահատվածում մանկավարժահոգեբանական աջակցություն է ստացել 191 ԿՁԱՊԿ ունեցող սան, որոնցից՝

- 111 սան ստացել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ Կենտրոնի մասնագետների կողմից,
- 70 սան աջակցություն է ստացել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից,
- 10 սանի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումը դադարեցվել է այլ ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատություն տեղափոխվելու պատճառով:

## 2.3. Նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններ

2026 թվականի հունվար–հունիս ամիսների ընթացքում Կենտրոնի սպասարկման տարածքի նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում սովորել է 12 ԿԱՊԿ ունեցող սովորող, որոնցից՝

- 10 սովորող ստացել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ Կենտրոնի մասնագետների կողմից,
- 1 սովորող աջակցություն է ստացել ուսումնական հաստատության կողմից,
- 1 սովորողի դեպքում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները չեն տրամադրվել ծնողի գրավոր դիմումի հիման վրա:

## 3. Կարողությունների զարգացում / վերապատրաստումներ

Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստումներն իրականացվել են ինչպես Կենտրոնում, այնպես էլ Կենտրոնին ամրակցված ուսումնական հաստատություններում, հետևյալ խորագրերով.

1. Կրթության աջակցող միջոցներ, մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ,
2. Աուտիզմի համախտանիշի դրսևորումները մանկական տարիքում,
3. Ուսումնառության համընդհանուր ձևավորում,

4. Ինչպես աջակցել աուտիզմ ունեցող սովորողին դպրոցական միջավայրում,
5. Ծնողավարման հմտությունների զարգացում,
6. Արդյունավետ հաղորդակցում,
7. Գրելու հմտությունների զարգացում,
8. Սոցիալական հմտությունների զարգացում,
9. Ուս. հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ,
10. Գիտակից ծնողավարությունը՝ որպես երեխայի զարգացման կարևոր գործոն,
11. Մասնագիտական այրում և հուզական հյուծվածություն,
12. Բուլինգի կանխարգելում և արձագանքում,
13. Վաղ միջամտությունը նախադպրոցական տարիքում որպես՝ սոցիալականացման հիմք թեմաներով:

Դասընթացներն իրականացրել են Կենտրոնի վերապատրաստող-մասնագետներ մ. գ. դոկտոր Ժաննա Պայլոզյանը, Աուտիզմ ազգային հիմնադրամի արտաքին կապերի և հանրային իրազեկման գծով ղեկավար, էրգոթերապիստ Ինեսսա Հարությունյանը, Աստղիկ Գրիգորյանը, Անուշ Ղազարյանը, Սուսաննա Խաչատրյանը, Անի Մայիլյանը և Անի Աթիկյանը:

Կենտրոնի կողմից իրականացված վերապատրաստումներին մասնակցել են **4914** անձինք՝ վարչական աշխատողներ, մասնագետներ, դասախոսներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, դաստիարակներ, դաստիարակի օգնականներ և ծնողներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են վերապատրաստման 237 դասընթացներ 113 ուսումնական հաստատություններում, ինչպես նաև Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում:

**Վերապատրաստումներին մասնակցել են 4914 անձինք, այդ թվում՝**

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ (ՆՈւՀ)՝ **951**,
- Դպրոցների ներկայացուցիչներ՝ **3921**,
- Միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների (ՄԿՈւ) ներկայացուցիչներ՝ **152**:

**Վերապատրաստումներն իրականացվել են հետևյալ հաստատություններում.**

**Հիմնական դպրոցներ՝** թիվ 59, 44, 48, 84, 85, 125, 136, 147, 117, 21, 36, 37, 51, 56, 63, 76, 77, 78, 82, 128, 129, 130, 132, 145, 151, 172, 11, 91, 152, 181, «Այբ» դպրոց, «Բյուրակն» կրթահամալիր, «Բյուրակն» հիմնադրամ, Ֆրանսիական վարժարան, «Էվրիկա» դպրոց, Մխիթար Սեբաստացի Արևմուտք, Արևելք, Հյուսիս, Հարավ, Միջին դպրոց, «Հայ կրթություն» կ/հ, «Երևակ» կ/հ, «Ուսում» ՍՊԸ:

**Ավագ դպրոցներ՝** թիվ 127, 54, 83, 148, 190, 112, 105, Մխ. Սեբաստացի Ավագ, Հերացի ա/դ, Հայ-չինական բարեկամության հիմնադրամ, Բրիտանական միջազգային դպրոց, Օլիմպիական հերթափոխի մզ մդ, «Եվրոպական» վարժարան, «Եվրասիա» վարժարան :

**Միջնակարգ դպրոց՝** թիվ 113, «Տաթև» դպրոց:

**Հատուկ դպրոցներ՝** ՏԽՈւԵ թիվ 14, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր, Ֆիզմաթ հ/դ:

**Մսուր–մանկապարտեզներ՝** թիվ 22, 23, 25, 27, 26, 28, 29, 32, 33, 34, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 157, 158, 159, 160, 161, 162, 76, 77, 78, 80, 83, 86, 87, 94, 95, 96, Մխ. Սեբ. Հյուսիս, Հարավ, Արևելք, Արևմուտք, Քոլեջ, «Էդի ընդ Էդիտ» ՍՊԸ, «Ավետիս» մանկապարտեզ, «Մանկան երազ», «Ավրորա քիդս», «Հեքիաթ քիդս», «Կրեատիվ ԼԱԲԲ» ՍՊԸ, «Բարև» մանկապարտեզ:

**Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններ՝** Երևանի զարդարվեստի արհեստագործական ուսումնարան, Երևանի պետական հումանիտար քոլեջ, Երևանի երաժշտամանկավարժական քոլեջ, Երևանի թիվ 1 պետական քոլեջ, Երևանի հումանիտար-տեխնիկական քոլեջ, Հայաստանում Ֆրանսիական քոլեջ:

## 4. Խորհրդատվություն

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի մասնագետների կողմից տրամադրվել է **2365** խորհրդատվություն, որոնք ուղղված են եղել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ) սովորողների կրթության կազմակերպման, մասնագիտական աջակցության և ներառական կրթության արդյունավետ իրականացման գործընթացների ապահովմանը: Խորհրդատվությունները իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- ԱՈւԶՊ-ով սահմանված խորհրդատվություններ,
- ԱՈւՊ-ով սահմանված խորհրդատվություններ,
- Մշտադիտարկումներով պայմանավորված,
- ԿԱՊԿ գնահատման և ՄՀ աջակցության կարգի վերաբերյալ,
- ԿՁԱՊԿ գնահատման և ՄՀ աջակցության կարգի վերաբերյալ:

Խորհրդատվությունները տրամադրվել են Կենտրոնին ամրակցված 115 ուսումնական հաստատությունների տնօրեններին, վերջիններիս տեղակալներին, մասնագիտական թիմերի անդամներին, ուսուցիչներին և ծնողներին:

**Խորհրդատվություններին մասնակցել են 5569 անձինք, այդ թվում՝**

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ (ՆՈւՀ)՝ **1327**,
- Դպրոցների ներկայացուցիչներ՝ **4162**,
- Միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների (ՄԿՈւ) ներկայացուցիչներ՝ **80**:

## 5. Մշտադիտարկում

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ին ամրակցված ուսումնական հաստատություններում իրականացվել է 156 մշտադիտարկում՝

- Հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ 65 մշտադիտարկում,
- Նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ 81 մշտադիտարկում,
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 10 մշտադիտարկում,

**Մշտադիտարկումներն իրականացվել են հետևյալ հիմնական ուղղություններով.**

- ԿԱՊԿ / ԿՁԱՊԿ գնահատման գործընթաց,
- Ուսումնական գործընթացի ներառականություն,
- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպում,
- Ծնող–ուսուցիչ–հաստատություն համագործակցություն,
- Հաստատության հոգեբանի գործունեություն,
- Հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայի հանդեպ բռնության դեպքերի բացահայտում և կանխարգելում:

**Մշտադիտարկման արդյունքներ**

**1. «ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ գնահատման գործընթաց» ուղղությամբ**

Սպասարկման տարածքի 56 դպրոցներում, 81 ՆՈւՀ-երում և 10 միջին մասնագիտական

ուսումնական հաստատություններում իրականացվել է սովորողների և սաների անհատական թղթապանակների մշտադիտարկում: Ուսումնասիրվել են ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև գործող կարգավորումներով սահմանված ձևաթղթերի առկայությունը :

**2. «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ուղղությամբ**

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել է, որ մի շարք ուսումնական հաստատություններում ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ ունեցող երեխաների արդյունավետ աջակցության կազմակերպման համար ռեսուրս սենյակներ չկան կամ համապատասխան կահավորմամբ և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով հագեցած չեն: Հայտնաբերված խնդիրների հաղթահարման նպատակով հաստատություններին տրամադրվել են խորհրդատվություններ և գործնական ուղղորդումներ:

**3. «Հաստատության հոգեբանի գործունեություն» ուղղությամբ**

Ուսումնական հաստատությունների հոգեբաններին տրամադրվել են մասնագիտական խորհրդատվություններ, մեթոդական նյութեր: Կազմակերպվել են քննարկումներ՝ մասնագիտական կարողությունների զարգացման, փորձի փոխանակման և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

**4. «Ուսումնական գործընթացի ներառականություն» ուղղությամբ**

Դիտարկվել են ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման պայմանները, ուսուցման գործընթացում կիրառվող հարմարեցումները, դասավանդման մատչելիության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև ԱՈւՊ/ԱՈւԶՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների արդյունավետությունն ու կիրառելիությունը:

**5. «Ծնող–ուսուցիչ–հաստատություն համագործակցություն» ուղղությամբ**

Ուսումնասիրվել է ծնողների և մանկավարժների ներգրավվածությունը՝ որպես մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներ, երեխաների գնահատման, ինչպես նաև ԱՈւՊ/ԱՈւԶՊ մշակման և իրականացման գործընթացներում: Համագործակցության ամրապնդման նպատակով ծնողներին և մանկավարժներին տրամադրվել են համապատասխան խորհրդատվություններ և մասնագիտական ուղղորդումներ:

**6. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտում և կանխարգելում» ուղղությամբ**

Դիտարկվել են ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության (ԵՊ) թիմերի ձևավորման գործընթացները, երեխայի նկատմամբ բռնության և բուլինգի դեպքերին պատշաճ արձագանքումը, անհրաժեշտ փաստաթղթերի և ձևաթղթերի առկայությունը, ինչպես նաև իրականացված կանխարգելիչ և արձագանքման աշխատանքները:

## 6. Խելամիտ հարմարեցումներ

2026 թվականի հունվար–հունիս ամիսների ընթացքում Կենտրոնի սպասարկման տարածքում խելամիտ հարմարեցումներով ապահովվել են՝

- 32 նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈւՀ)՝ ընդհանուր՝ 165 սան,
- 42 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ ընդհանուր՝ 938 սովորող:

Խելամիտ հարմարեցումները կիրառվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական նյութերի մատչելիության, ուսուցման մեթոդների հարմարեցման, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների արդյունավետ իրականացման նպատակով:

## 7. Կրթության կազմակերպման օժանդակող ուսումնամեթոդական նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում

2026 թվականի հունվար–հունիս ամիսների ընթացքում Կենտրոնի մասնագետների կողմից իրականացվել է կրթության արդյունավետ կազմակերպմանն ուղղված ուսումնամեթոդական նյութերի մշակում և համալրում՝ նպատակ ունենալով բարձրացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակը և ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ) երեխաների կրթության կազմակերպման արդյունավետությունը:
Մշակված ուսումնամեթոդական նյութեր՝

**Մեթոդական ձեռնարկներ – 1**

- հեղինակ՝ Ա. Վարդանյան

**Խաղեր-20**

- հեղինակ՝ Մ. Սերոբյան, Ա. Խչոյան, Թ. Խուբլարյան, Է. Ամզայան

**Աշխատանքային տետր-5**

- հեղինակ՝ Ն. Մուրադյան, Մ. Սերոբյան, Սահակյան Թ.

**Ուղեցույց-4**

- հեղինակ՝ Տոնոյան Լ., Ադամյան Ա.

**Դիդակտիկ պարագա-10**

- հեղինակ՝ Ս. Նաջարյան , Շ. Էլոյան, Է. Ամզայան

**Մոդուլային դասընթաց-2**

- հեղինակ՝ Ա. Գրիգորյան, Ա. Ղազարյան

Կենտրոնը ձեռք է բերել նաև 100 զարգացնող և աշխատանքային նյութեր ԿԱՊԿ/ԿԶԱՊԿ երեխաների հետ աշխատող մասնագետների համար:

## 8. Համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում «Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակել է ընդլայնել և ամրապնդել գործընկերային կապերը՝ ձևավորելով բազմաշերտ համագործակցության հարթակներ կրթության, գիտության, առողջապահության, սոցիալական և հասարակական ոլորտների կառույցների հետ: Համագործակցությունները միտված են եղել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակի բարձրացմանը, մասնագետների շարունակական զարգացմանը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը և ոլորտում նորարարական մոտեցումների ներդրմանը: Թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրեն Գոռ Մսրիկյանը և տեղակալ Մարի Օհանյանը հունվար ամսին մասնակցեցին «Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիայի հոբելյանական համաժողովին, որը նվիրված էր ասոցիացիայի գործունեության 5-ամյակին: Համաժողովը կայացավ AMAA-ի Ավետիսյան դպրոցում՝ միավորելով

պետական և ոչ պետական կրթական հաստատությունները ներկայացնող առանցքային դերակատարներին: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԱԺ ԳԿՄՍԵՍ հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ոլորտային կառույցների ղեկավարներ, ինչպես նաև ասոցիացիայի անդամ և ոչ անդամ դպրոցների ներկայացուցիչներ: Համաժողովի նպատակն էր ամփոփել ասոցիացիայի անցած հնգամյակը, անդրադառնալ ոչ պետական կրթության ոլորտում առկա զարգացումներին և խնդիրներին, ուրվագծել համագործակցության հնարավորությունները և ոլորտի զարգացման հետագա ուղղությունները: Նույն ամսին Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ում հյուրընկալեցինք մանկավարժական գիտությունների դոկտոր, Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Ժաննա Պալյանին: Թիվ 3 ՏՄԱԿ-ի և դոկտոր Պալյանի համագործակցության շրջանակներում մարտ ամսին կենտրոնի լոգոպեդների համար մեկնարկեց վերապատրաստման դասընթաց, որի նպատակը ոչ միայն մասնագետների տեսական գիտելիքների ընդլայնումն էր, այլև գործնական կարողությունների կատարելագործումը, նոր մեթոդների յուրացումը: Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ը կարևորում է նման նախաձեռնությունները և շարունակելու է ստեղծել մասնագիտական զարգացման հարթակներ կենտրոնի աշխատակիցների համար: Սույն թվականի փետրվարի 11-ին թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրեն Գոռ Մսրիկյանը, տեղակալներ Մարի Օհանյանը և Գայանե Հակոբյանը, ինչպես նաև լոգոպեդ Լուսինե Ալթունյանը մասնակցեցին «Էպիլեպսիա՝ ստվերից դուրս» խորագիրը կրող համաժողովին: Համաժողովը կազմակերպվել էր Արաբկիր բժշկական համալիրի և «Կյանքի ճանապարհ» բարեգործական հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ: Այն համախմբել էր մասնագետների, նախարարությունների ներկայացուցիչների, մանկավարժների, ծնողների և խնդրով մտահոգ բազմաթիվ մարդկանց: Քննարկումների առանցքում էին. բուժման ժամանակակից մոտեցումները, վիրահատական հաջողված միջամտությունները, երեխաների կրթության կազմակերպումը, սոցիալական ինտեգրման կարևորությունը: Նման նախաձեռնությունները կարևոր են հատկապես կրթական համատեքստում: Երբ առողջապահությունը և կրթությունը գործում են համադրաբար, ձևավորվում է անվտանգ, աջակցող և ներառական միջավայր յուրաքանչյուր երեխայի համար:

Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրենությունը հաշվետու ժամանակահատվածում մի շարք այցեր է կատարել սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններ: Այցերի ժամանակ հատկապես դիտարկվել են ուսումնական գործընթացի կառուցվածքային առանձնահատկությունները, ծնող-դպրոց համագործակցության արդյունավետությունը, ԿԱՊԿ ունեցող սովորողների՝ ուսումնական գործընթացում ներառման առանձնահատկությունները:

Հաշվետու ժամանակահատվածում Մանկավարժական պրակտիկայի շրջանակներում Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ում հյուրընկալեցինք Հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողների խմբերին՝ մ.գ.թ. Աննա Ասլանյանի և Գեղեցիկ Գրիգորյանի ղեկավարությամբ: Այցի շրջանակում ուսանողները ծանոթացել են Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններին, մասնագիտական թիմերի աշխատանքի կազմակերպմանը, ինչպես նաև կրթական հաստատություններում իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության առանձնահատկություններին: Թիվ 3 ՏՄԱԿ-ը կարևորում է բուհերի հետ արդյունավետ փոխգործակցությունը՝ այն դիտարկելով որպես ապագա մասնագետների կարողությունների ձևավորման և մասնագիտական ինքնուրույնության ամրապնդման առանցքային պայման: Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Գոռ Մսրիկյանը մասնակցել է Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակում կազմակերպված միջոցառմանը, որը նվիրված էր ներառականության զարգացմանը մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում: Միջոցառման ընթացքում ներկայացվել է «Ներառականությունը Հայաստանի ՄԿՈՒ համակարգում» խորագիրը կրող զեկույցի նախագծային տարբերակը: Քննարկվել են ոլորտի արդի մարտահրավերները և հնարավոր զարգացումները: Քննարկումները կենտրոնացած էին հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց կրթական ներառման, կարողությունների զարգացման և համակարգային լուծումների վրա:

Միջոցառումը փորձի փոխանակման, միջազգային համագործակցության և կրթության ոլորտում արդյունավետ մեխանիզմների ներդրման կարևոր հարթակ էր:

Թիվ 3 ՏՄԱԿ-ը շարունակում է ակտիվ համագործակցությունը «Քոննեքթ» վաղ միջամտությունների կենտրոնի հետ: Մարտ ամսին կայացավ «Քոննեքթ» կենտրոնի տնօրեն Լիլիթ Մազմանյանի և Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ Մարի Օհանյանի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվել է 2025 թվականին երկու կառույցների միջև կնքված համագործակցության հուշագրի կատարման ընթացքը: Կողմերը անդրադարձել են իրականացված աշխատանքներին և մտքեր փոխանակել համագործակցությունն առավել արդյունավետ և ինտենսիվ դարձնելու հնարավորությունների շուրջ: Քննարկման կարևոր ուղղություններից մեկը վերաբերում էր հոգեբանների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացի մշակմանը, որը նպատակ ունի զարգացնել ոլորտի մասնագետների կարողությունները և կատարելագործել մանկավարժահոգեբանական աջակցության համակարգը:

Թիվ 3 ՏՄԱԿ-ը կարևորում է գործընկերային համագործակցությունները, որոնք նպաստում են մասնագիտական զարգացմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցությանը:

Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի առաջին մեթոդական ձեռնարկը պաշտոնապես ներկայացվեց մարտ ամսին: Թիվ 3 ՏՄԱԿ-ի հատուկ մանկավարժ Անահիտ Վարդանյանը՝ համագործակցելով մանկավարժ Ֆրիդա Երիցյանի հետ, հեղինակել է «Վարժեցրու ձեռքդ, միտքդ» խորագիրը կրող մեթոդական ձեռնարկը: Սույն ձեռնարկի շնորհանդեսը համախմբել էր բազմաթիվ հյուրերի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մուրադյան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Լիլիթ Մնացականյան, ուսումնական հաստատությունների տնօրեններ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսներ, մանկավարժներ և ծնողներ: Սույն միջոցառումը դարձավ ոչ միայն նոր մեթոդական ձեռնարկի ներկայացման առիթ, այլև կրթության ոլորտի մասնագետների հանդիպման, գաղափարների փոխանակման և համագործակցության ամրապնդման յուրօրինակ հարթակ:

Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը շարունակում է փոխգործակցությունը Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ուսումնական հաստատությունների հետ: «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ներառական կրթությանը վերաբերող առանցքային հարցեր: Տնօրեն Գոռ Մարիկյանը շնորհակալություն հայտնեց պրոռեկտոր Յանա Տռոյնիչին՝ ներառական կրթության և խթանող միջավայրի ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքների համար՝ պատրաստակամություն հայտնելով ցուցաբերել խորհրդատվական աջակցություն:

2025–2026 ուսումնական տարին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հռչակվել է «Անվտանգ և ապահով կրթության տարի»՝ նպատակ ունենալով ամրապնդել դպրոցներում անվտանգ և աջակցող կրթական միջավայրի ձևավորումը: Նախաձեռնության շրջանակում Երևանի Վարդգես Պետրոսյանի անվան N 51 հիմնական դպրոցում կայացավ «Ռիսկային իրավիճակներ, բուլինգ» խորագրով աշխատաժողով և նախագծային աշխատանքների ներկայացում: Միջոցառմանը ներկա էր ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ով կարևորեց անվտանգության թեմաներով դպրոցական միջոցառումների շարունակական և համակարգված իրականացումը՝ ընդգծելով դրանց նշանակությունը տարբեր տարիքային խմբերի սովորողների համար: Միջոցառմանը մասնակցեց նաև Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրեն Գոռ Մարիկյանը, ով հանդես եկավ ելույթով՝ շեշտադրելով բուլինգի կանխարգելման, վաղ արձագանքման և մասնագիտական համագործակցության կարևորությունը: Քննարկման ընթացքում դպրոցի սովորողները ներկայացրեցին բուլինգի կանխարգելման թեմայով նախագծային աշխատանքներ՝ պաստառներ, տեսանյութեր՝ ցուցաբերելով թեմայի գիտակցված ընկալում և պատասխանատու մոտեցում: Նման միջոցառումները կարևոր քայլ են դպրոցներում անվտանգային միջավայրի ձևավորման, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտի ամրապնդման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում կայացավ «Սոցիալական հմտությունների զարգացում» խորագիրը կրող տեսագործնական հանդիպում-քննարկումը, որը միտված էր ՏՄԱԿ-ի մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը: Քննարկումը վարում էր My Way Socio-Habilitation, Educational, Vocational Training Day Care Center Աուտիզմ ազգային հիմնադրամի արտաքին կապերի և հանրային իրազեկման գծով ղեկավար, էրգոթերապիստ Ինեսսա Հարությունյանը: Հանդիպման ընթացքում կարևորվեց սոցիալական հմտությունների ձևավորումը և դրանց դերը երեխայի լիարժեք սոցիալականացման և միջանձնային առողջ փոխհարաբերությունների կառուցման գործում: Մասնակիցները հնարավորություն ունեցան ոչ միայն տեսական գիտելիքներ ձեռք բերելու, այլև մասնակցելու գործնական վարժություններին՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ:
Նման նախաձեռնությունները շարունակական բնույթ կկրեն՝ նպաստելով մասնագիտական համագործակցության խորացմանը և ներառական կրթության զարգացմանը:
Հաշվետու ժամանակահատվածում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների տնօրենների մասնակցությամբ, որը վարում էր ՀՄԿ տնօրեն Լիլիթ Մնացականյանը:
Հանդիպմանը մասնակցել է Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Գոռ Մսրիկյանը: Քննարկումները վերաբերում էին կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, մասնագիտական ռեսուրսների համալրմանն ու նպատակային բաշխմանը, ՏՄԱԿ-ների հաստիքացուցակներին և մասնագետների վարձատրության համակարգին, ինչպես նաև կանոնադրական փոփոխություններին:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի սոցիալական մանկավարժ Լուսինե Տոնոյանը հաղթող է ճանաչվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Տարվա լավագույնները» մրցույթի մարտ ամսվա արդյունքներով: Լուսինե Տոնոյանի այս հաղթանակը ոչ միայն նրա մասնագիտական բարձր պատրաստվածության վկայությունն է, այլև երեխաների կրթական և սոցիալական ներառման գործընթացում դրսևորված ամենօրյա նվիրումի, հոգատարության և պատասխանատվության ցուցիչը: Լուսինե Տոնոյանի գործունեությունը կարևոր դեր ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության, նրանց սոցիալական հմտությունների զարգացման և կրթական միջավայրում լիարժեք ներգրավումն ապահովելու գործում:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում մեկնարկեցին լոգոպեդների համար նախատեսված վերապատրաստման 12-ժամյա դասընթացները՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Ժաննա Պայլոզյանի հետ համագործակցության շրջանակում:
Վերապատրաստումները միտված էին ոչ միայն մասնագետների տեսական գիտելիքների խորացմանը, այլև գործնական հմտությունների զարգացմանը, ժամանակակից մեթոդների կիրառմանը և մասնագիտական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:
Դասընթացների առանցքում էին՝
- ժամանակակից լոգոպեդական մեթոդների կիրառությունը կրթական միջավայրում,
- խոսքի խանգարումների գնահատումը և միջամտությունների նոր մոտեցումները,
- դեպքերի գործնական վերլուծությունը:

Վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ և հանդիսանում են ՏՄԱԿ-ի կողմից իրականացվող համակարգային աշխատանքի կարևոր բաղադրիչ:
Թիվ 3 ՏՄԱԿ-ը հետևողականորեն զարգացնում է իր մասնագիտական ներուժը՝ վստահ լինելով, որ միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի լիարժեք

իրացումը:
Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի սպասարկման տարածքում գտնվող ՆՈւՀ-երի հոգեբանների համար տեղի ունեցավ վերապատրաստման դասընթաց, որի նպատակը մասնագետների կարողությունների զարգացումն էր:
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված վերապատրաստումը կրում էր «Նախադպրոցական հաստատություններում աշխատող հոգեբանների գործունեությունը» խորագիրը:
Դասընթացը վարում էր ՀՄԿ-ի Սոցիալ-հոգեբանական անվտանգության ապահովման բաժնի պետ Անի Ավագյանը՝ ներկայացնելով պրակտիկ մոտեցումներ և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստող գործիքներ:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանում կայացած MindX միջազգային կրթական ֆորումը, որը կազմակերպվել էր Դասավանդիր Հանուն Հայաստանի-ի(Teach For Armenia) և Հայաստանի Կրթական Նախաձեռնության ջանքերով, դարձավ կրթության ոլորտի ներկայացուցիչների համախմբման կարևոր հարթակ՝ միավորելով պետական կառավարման, կրթության, տեխնոլոգիական և բիզնես ոլորտների ներկայացուցիչներին: Ֆորումին մասնակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, միջազգային և տեղական փորձագետներ, կրթական առաջնորդներ և ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ֆորումն առանձնացավ միջազգային մասնակցությամբ՝ ներգրավելով տարբեր երկրների փորձագետների, որոնք ներկայացրին կրթության զարգացման ժամանակակից մոտեցումները՝ հատկապես տեխնոլոգիաների կիրառման, կրթության արդյունավետության բարձրացման և սովորողակենտրոն միջավայրերի ձևավորման ուղղություններով: Ֆորումի աշխատանքներին մասնակցեցին նաև Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Գոռ Մսրիկյանը և տնօրենի տեղակալ Մարի Օհանյանը:
Քննարկումների առանցքում էին՝
կրթության և աշխատաշուկայի միջև կապի ամրապնդումը,
արհեստական բանականության և թվային գործիքների ինտեգրումը կրթության մեջ,
ներառական և մարդակենտրոն կրթական միջավայրերի զարգացումը,
կրթության կառավարման և համագործակցության նոր մոդելները:
MindX-ը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ ժամանակակից կրթությունը դուրս է գալիս դասասենյակի սահմաններից և ձևավորվում է բազմաշերտ համագործակցության արդյունքում՝ միավորելով տարբեր ոլորտների փորձն ու կարողությունները: Մասնակցությունն այս ֆորումին հնարավորություն տվեց վերաիմաստավորելու ՏՄԱԿ-ի դերակատարումը՝ որպես աջակցող և միաժամանակ համակարգային փոփոխություններին մասնակցող կառույց, որի գործունեությունը միտված է յուրաքանչյուր երեխայի կրթական ներուժի բացահայտմանը: Նման հարթակները կարևոր են նաև նոր համագործակցությունների ձևավորման և փորձի փոխանակման տեսանկյունից՝ նպաստելով ներառական և արդյունավետ կրթական միջավայրերի զարգացմանը Հայաստանում:
Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում շարունակվում են ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները:
Կենտրոնում մանկավարժական պրակտիկա են անցնում Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և Ներառական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողները:
Պրակտիկայի շրջանակներում ուսանողները.
ներգրավվում են մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացներում,
ծանոթանում են աշխատանքի առանձնահատկություններին,
ձեռք են բերում կիրառական գիտելիքներ:
Պրակտիկան նպատակ ունի ապահովել տեսական գիտելիքների և գործնական փորձի համադրումը՝ նպաստելով ապագա մասնագետների կայացմանը և կրթական համակարգում արդյունավետ գործունեություն ծավալելուն:

Հաշվետու ժամանակահատվածում Հանրակրթական դպրոցների «Երեխաների պաշտպանության թիմերի» մասնակցությամբ Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում տեղի ունեցան վերապատրաստման դասընթացներ՝ նվիրված ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության գործընթացների արդյունավետ կազմակերպմանը:
Դասընթացի շրջանակներում վերապատրաստող-մասնագետները անդրադարձան.
երեխայի իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներին,
բռնության, բուլինգի և ռիսկային իրավիճակների հնարավոր հետևանքներին,
արձագանքման և ուղղորդման հստակ ընթացակարգերին,
դպրոցում գործող «Երեխաների պաշտպանության թիմի» դերակատարությանը,
ներքին աջակցման և արտաքին ծառայությունների ներգրավման մեխանիզմներին:
Իրականացվել են նաև գործնական աշխատանքներ, որոնց շնորհիվ մասնակիցները առարկայական պատկերացում կազմեցին ռիսկերի գնահատման, արձագանքման և յուրաքանչյուր իրավիճակում երեխայի լավագույն շահը ապահովելու վերաբերյալ:
ՏՄԱԿ-ի մասնագետները շարունակում են աջակցել դպրոցներին՝ ստեղծելու անվտանգ և ապահով կրթական միջավայր յուրաքանչյուր սովորողի համար:
Հաշվետու ժամանակահատվածում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում կազմակերպվեց «Գիտակից ծնողավարությունը՝ որպես երեխայի զարգացման կարևոր գործոն» խորագրով վերապատրաստում՝ նախատեսված ծնողների համար:
Վերապատրաստման ընթացքում ընդգծվել է ծնողավարության գիտակցված մոտեցումների կարևորությունը, երեխայի զարգացման վրա դրանց ազդեցությունը, ինչպես նաև ծնող-երեխա արդյունավետ հաղորդակցության ձևավորման հիմնարար սկզբունքները:
Դասընթացը վարել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի վերապատրաստող-մասնագետ Արմինե Ավագյանը:
Նման նախաձեռնությունները միտված են ընտանիք-դպրոց համագործակցության ամրապնդմանը և երեխայի համակողմանի զարգացումն ապահովելուն:
Հաշվետու ժամանակահատվածում «Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը և Ներառում Հայաստան հասարակական կազմակերպությունը մեկնարկեցին համագործակցության նոր փուլը՝ ամրագրելով այն փոխըմբռնման հուշագրով:
Հիմք ընդունելով 2025 թվականի համագործակցության հաջող և արդյունավետ փորձը՝ Կողմերը վերահաստատեցին իրենց հանձնառությունը շարունակելու փոխգործակցությունը նաև 2026–2028 թվականներին: Հուշագրի առանցքում համատեղ ջանքերով համընդհանուր ներառական կրթության սկզբունքների վրա հիմնված ամենամյա աշխատաժողով կազմակերպելու գաղափարն է: «Ներառում Հայաստան» հասարակական կազմակերպության նախագահ Սյուզաննա Պետրոսյանը իր խոսքում կարևորեց նախաձեռնության շարունակականությունը. «Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Մսրիկյանն իր հերթին արժևորեց փոխգործակցության նման ձևաչափը. Հուշագիրը նախատեսում է համատեղ նախաձեռնությունների իրականացում՝ ուղղված մասնագիտական կարողությունների զարգացմանը, կրթական ծրագրերի և հետազոտությունների խթանմանը, փորձի փոխանակման մեխանիզմների ընդլայնմանը, ինչպես նաև ներառականության արժեքների տարածմանը կրթական միջավայրում:
Գործակցությունը միտված է համախմբելու ոլորտի մասնագիտական ներուժը՝ ապահովելով շարունակական զարգացում և կայուն արդյունքներ:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հատուկ մանկավարժ Ամալյա Հայրիկյանը հաջողությամբ ավարտել է «Applied Behavior Analysis Technician (ABAT)» վերապատրաստման երկամյա ծրագիրը՝ ստանալով համապատասխան հավաստագիր: Վերապատրաստումը միտված էր կիրառական վարքային

վերլուծության (ABA) ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացմանը, ժամանակակից մեթոդների յուրացմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության արդյունավետության բարձրացմանը:
Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ում մենք կարևորում ենք աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը՝ որպես ներառական կրթության արդյունավետության բարձրացման և յուրաքանչյուր սովորողի կրթության հասանելիության ապահովման հիմնարար պայման:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան թիվ 21 հիմնական դպրոցում կայացավ «Գիտություն և նորարարություն» խորագիրը կրող ցուցահանդեսը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության հանրակրթության և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ Ստալ Սարդարյանը, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Լիլիթ Մնացականյանը, Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Գոռ Մսրիկյանը: Ցուցահանդեսը կազմակերպվել էր հանրակրթության պետական նոր չափորոշչի շրջանակում՝ որպես նախագծային ուսուցման և ստեղծարար մոտեցումների ներկայացման հարթակ: Միջոցառման ընթացքում 7-9-րդ դասարանների սովորողները ներկայացրին իրենց իրականացրած նախագծային աշխատանքների վերջնարդյունքները: Նախագծային աշխատանքներում ներառված էին չորս ուղղություններ՝ մշակութային, ԲՏՃՄ, կիրառական և տեխնոլոգիական: Հյուրերը ծանոթացան ներկայացված աշխատանքներին, զրուցեցին սովորողների հետ: Ցուցահանդեսի նպատակն էր նպաստել սովորողների ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ընդգծել նախագծային աշխատանքների կարևորությունն ու արդյունավետությունը ժամանակակից կրթական գործընթացում:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում կայացավ «Խնդրահարույց վարքի գնահատումը, կանխարգելումն ու միջամտությունը դպրոցական միջավայրում» խորագիրը կրող վերապատրաստման դասընթացը, որն իրականացվեց Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ:
Դասընթացին մասնակցեցին ՏՄԱԿ-ի մասնագետները: Վերապատրաստման ընթացքում անդրադարձ կատարվեց.
ներառական կրթության ապահովման արդյունավետ մոտեցումներին,
մանկավարժահոգեբանական աջակցության գործիքակազմի զարգացման հնարավորություններին,
սովորողների հետ աշխատանքի կազմակերպման գործնական մեխանիզմներին,
խնդրահարույց վարքի գնահատման, կանխարգելման և միջամտության մասնագիտական ռազմավարություններին:
Դասընթացը վարեց Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի վերապատրաստող-մասնագետ, վարքային թերապիստ Մարինա Բաբայանը:
Նման դասընթացները կարևոր են աջակցող մասնագետների կարողությունների շարունակական զարգացման, փորձի փոխանակման և ներառական կրթության արդյունավետության բարձրացման առումներով:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի համագործակցության շրջանակներում բուհի դասախոսական և մանկավարժական կազմի համար կազմակերպվեցին վերապատրաստումներ: Դընթացն ընդգրկում էր ներառական կրթության, մանկավարժահոգեբանական աջակցության, ուսումնառության ռազմավարությունների, լսարանի կառավարման, ինչպես նաև բուլինգի կանխարգելման թեմաները:
Կարևոր է, որ ներառական կրթությունը դիտարկվի ոչ միայն որպես իրավական կամ կազմակերպչական պահանջ, այլև կրթության որակի, մատչելիության և արդյունավետության կարևոր բաղադրիչ:
Նման համագործակցությունները հնարավորություն են տալիս կրթական համակարգի տարբեր օղակներում ձևավորել միասնական մասնագիտական մոտեցումներ և ամրապնդել աջակցող կրթական միջավայրը:

Շնորհակալություն ենք հայտնում համալսարանի ղեկավարությանը և մասնակիցներին՝ ակտիվ ներգրավվածության, մասնագիտական հետաքրքրվածության և համագործակցության համար:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն Գոռ Մարիկյանը, տնօրենի տեղակալ Մարի Օհանյանը և կենտրոնի մասնագետները ներկա գտնվեցին Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ.145 հիմնական դպրոցի Վերջին դաս միջոցառմանը: Միջոցառման ընթացքում Երևանի թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրեն Գոռ Մարիկյանը շնորհակալագիր հանձնեց դպրոցի տնօրեն Գայանե Աղասարյանին՝ ՏՄԱԿ–դպրոց արդյունավետ համագործակցությանը նպաստելու, ներառական կրթության ամրապնդմանը և կրթական գործընթացում սովորողակենտրոն մոտեցումների զարգացմանն աջակցելու համար:
Կարևորելով դպրոց–ՏՄԱԿ շարունակական համագործակցությունը՝ վստահ ենք, որ համատեղ և համակարգված աշխատանքը շարունակում է նպաստել յուրաքանչյուր երեխայի ներուժի բացահայտմանն ու աջակցող կրթական միջավայրի ձևավորմանը:
Հաշվետու ժամանակահատվածում Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հոգեբանները մասնակցեցին «Վարքային թերապիստը միջամտության մեջ. գնահատումից մինչև արդյունք» խորագիրը կրող մասնագիտական դասընթացին, որը վարում էր վարքային վերլուծաբան, Connect վաղ միջամտությունների կենտրոնի հիմնադիր Լիլիթ Մազմանյանը:
Դասընթացին ներկա էին նաև թիվ 3 ՏՄԱԿ-ի տնօրեն Գոռ Մարիկյանը և տնօրենի տեղակալ Մարի Օհանյանը: Դասընթացի շրջանակներում անդրադարձ կատարվեց կիրառական վարքային վերլուծության(ABA) հիմնարար սկզբունքներին, վարքային գնահատման և տվյալահեն միջամտությունների պլանավորման գործընթացներին, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներին: Մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու վարքային դժվարությունների հաղթահարման ժամանակակից մոտեցումներին և դիտարկել մանկավարժահոգեբանական աջակցության շրջանակներում դրանց կիրառման գործնական առանձնահատկությունները: Դասընթացի ավարտին Գոռ Մարիկյանը բարձր գնահատեց նախաձեռնության մասնագիտական բովանդակությունն ու գործնական նշանակությունը՝ ընդգծելով, որ նման միջոցառումները կարևոր դեր ունեն մասնագետների կարողությունների զարգացման, փորձի փոխանակման և երեխաներին տրամադրվող ծառայությունների որակի շարունակական բարելավման գործում: Հատկանշական է, որ այս դասընթացը հերթական հաջողված համագործակցությունն էր 2025 թվականին Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և «Connect» վաղ միջամտության կենտրոնի միջև ստորագրված փոխգործակցության հուշագրի շրջանակներում:

Կենտրոնի անվանումը՝ «Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝ ________________ (ստորագրություն) Գոռ Մարիկյան (անուն, ազգանուն)

Կ.Տ.

« 01 » « 07 » 2026թ.